

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ  
ST. KEVORK ARMENIAN CHURCH



ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՂԹԻԿ

Sunday Bulletin

ԿԻՐԱԿԻ, Օգոստոս 11, 2019

SUNDAY, August 11, 2019

9215 SE Church St., Clackamas, OR 97015

## ՃԱՇՈՒ ԱՎԵՏԱՐԱՆ


Մարկոս 2:1-12

**Մ**ի քանի օր յետոյ, երբ նա դարձեալ Կափառնայում մտաւ, լուր տարածուեց, թէ տանն է. <sup>2</sup> Եւ շատեր հաւաքուեցին, այնպէս որ այլեւս տեղ չմնաց, ոչ իսկ դռան առջեւ: Եւ նրանց քարոզում էր Աստծու խօսքը: <sup>3</sup> Եւ եկան նրա մօտ՝ բերելով մի անդամալոյծի, որին տանում էին չորս հոգով: <sup>4</sup> Եւ երբ ամբոխի պատճառով Յիսուսին չկարողացան մօտենալ, քանդեցին երդիկը այն տան, ուր գտնուում էր նա. Եւ բացելով առաստաղը, իջեցրին այն մահիճը, որի մէջ էր անդամալոյծը: <sup>5</sup> Եւ Յիսուս, տեսնելով նրանց հաւատը, անդամալոյծին ասաց. «Որդե՛ա՛կ, քո մեղքերը քեզ ներուած են»: <sup>6</sup> Օրէնսգետներից մի քանիսը, որ նստած էին այնտեղ, իրենց մտքում խորհում էին. <sup>7</sup> «Այս ի՞նչ է խօսում, սա հայիտյում է. ո՞վ կարող է մեղքերին թողութիւն տալ, եթէ ոչ՝ միայն Աստուած»: <sup>8</sup> Եւ Յիսուս իր հոգում իմացաւ, որ այնպէս են խորհում իրենց մտքում. ուստի ասաց. «Ինչո՞ւ ձեր մտքում այդ էք խորհում. <sup>9</sup> ո՞րն է աւելի դիրին. անդամալոյծին ասել՝ քո մեղքերը քեզ ներուած են, թէ՞ ասել՝ վե՛ր կաց, ա՛ն մահիճդ եւ գնա՛ քո տունը: <sup>10</sup> Բայց որպէսզի իմանաք, որ մարդու Որդին՝ որպէս Երկրի վրայ իշխանութիւն ունի ներելու մեղքերը, - ասաց նա անդամալոյծին, - <sup>11</sup> քե՛զ եմ ասում, վե՛ր կաց, ա՛ն քո մահիճը եւ գնա՛ քո տունը»: <sup>12</sup> Եւ վեր կացաւ ու անմիջապէս վերցնելով մահիճը՝ բոլորի առաջ դուրս ելաւ, այնպէս որ ամենքը զարմացան եւ փառք էին տալիս Աստծուն ու նրան. «Այսպիսի բան երբեք չենք տեսել»:



## GOSPEL READING

Mark 2:1-12



**A**nd when he entered again into Capernaum after some days, it was noised that he was in the house. And many were gathered together, so that there was no longer room [for them], no, not even about the door: and he spake the word unto them. And they come, bringing unto him a man sick of the palsy, borne off our. And when they could not come nigh unto him for the crowd, they uncovered the roof where he was: and when they had broken it up, they let down the bed whereon the sick of the palsy lay. And Jesus seeing their faith saith unto the sick of the palsy, Son, thy sins are forgiven. But there were certain of the scribes sitting there, and reasoning in their hearts, Why doth this man thus speak? He blasphemeth: who can forgive sins but one, [even] God? And straightway Jesus, perceiving in his spirit that they so reasoned within themselves, saith unto them, Why reason ye these things in your hearts?

Which is easier, to say to the sick of the palsy, Thy sins are forgiven; or to say, Arise, and take up thy bed, and walk? But that ye may know that the Son of man hath authority on earth to forgive sins (he saith to the sick of the palsy), I say unto thee, Arise, take up thy bed, and go unto thy house. And he arose, and straightway took up the bed, and went forth before them all; insomuch that they were all amazed, and glorified God, saying, We never saw it on this fashion.

# ԱՂՕԹՔ

Գրեց՝ Յովնան Արք. Տերտերեան



Գոյութեան ճարտարապետը Դուն ես՝  
ամենակարողդ Աստուած. Դուն, որ  
ողողեցիր աշխարհը Քու ամենաբաւական  
սիրովդ ու Քու պատկերիդ նմանութեամբ  
կեանք պարգեւեցիր աշխարհին ու հոգիիդ  
համաձայն շունչ տուիր մարդուն, որուն  
էութեան ծալքերուն մէջ հաստատեցիր նաեւ երկնայինը,  
մշտնջենականը, աստուածայինն ու հրաշալին՝  
ստեղծագործութեան ոգին, որպէսզի Քու պատրաստած  
ճանապարհով մարդը դէպի Քեզ բարձրացնէ:

Դուն ես յաիտենական կեանքին, Աստուած բազումողորմ:  
Դուն, որ Քու անսահման սիրովդ լուսաւորեցիր հոգիները  
մարդկանց, Քեզի կը վերընծայեմ կեանքս, որուն ճարտարապետն  
ես: Ահա կեանքս Քու ձեռքերուդ մէջ է եւ Քու փառքին առջեւ կը  
խոնարհի: Եւ իր ծնունդը կ'ապրի Քու առաջնորդութեամբ: Դուն ես,  
որ զիս կը տանիս դէպի լոյս, դէպի խաղաղութեան դուռը, որուն  
յաւէտ կարօտ է հոգիս:

# PRAYER

By Archbishop Hovnan Derderian



**You are the maker of beauty,  
Almighty God. You have flooded the world  
with Your all-satisfying Love and grant life to  
the world in the likeness of your image. You  
gave breath to the human being according to  
your image and planted the divine in the depths  
his soul. You granted him the miraculous soul to create and lifted him  
up closer to you.**

**You are the gate of eternal life, O Most Merciful God. To you, who  
have illuminated the souls of people through your boundless love, I  
rededicate my life, whose architect you are. My entire life bows before  
your glory and lives its rebirth with your guidance, which takes me to  
the light, to the gate of peace that my soul longs forever.**



## ՊԱՏՄՈՒԱԾՔ

### *Հաւազոյն Թարգմանութիւնը*

Չորս քահանաներ նստած կը գրուցէին թէ Սուրբ Գիրքի անգլերէն ո՞ր տարբերակը ամենաշատ կը հաւնին:

Առաջինը կ'ըսէ թէ ինք King James-ի թարգմանութեան տարբերակը կը հաւնի, քանի լեզուն շատ գեղեցիկ է:

Երկրորդը կ'ըսէ, թէ Ամերիկեան բարելաւուած թարգմանութիւնը կը սիրէ, քանի որ շատ նման է բնօրինակին, իսկ երրորդը կ'ըսէ՝ Mofatt-ի թարգմանութիւնը կը սիրէ, քանի որ բառապաշարը շատ արդիական է: Չորրորդ քահանան լուռ կը մնայ... Երբ հարց կու տան թէ ի՞նք որ թարգմանութիւնը կը նախընտրէ, կը պատասխանէ.

-Ես ամենաշատ իմ մօրս թարգմանութիւնը կը հաւնիմ: Բոլորը կը զարմանան, անոնք տեղեակ չէին, որ մայրը Սուրբ Գիրք թարգմանած էր:

-Այո, կ'ըսէ, մայրս Սուրբ Գիրքը թարգմանեց իր ապրած կեանքով, իր վերաբերմունքով ու արարքներով, իր բարութեամբ, անձնագոհութեամբ, ուրիշին միշտ լաւը ցանկանալով, երբեք չստելով ու չբամբասելով.. Եւ այդ մէկը ամենագեղեցիկ թարգմանութիւնն է, որուն երբեւէ հանդիպած եմ:



## **DO WHAT IS RIGHT ANYWAY**

**People are often unreasonable,  
Illogical, and self-centered;  
Love them anyway.**

**If you are kind,  
People may accuse you of selfish, ulterior motives;  
Be kind anyway.**

**If you are successful,  
You will win some false friends and some true enemies;  
Succeed anyway.**

**If you are honest and frank,  
People may cheat you;  
Be honest and frank anyway.**

**What you spend years building,  
Someone could destroy overnight;  
Build anyway.**

**If you find serenity and happiness,  
They may be jealous;  
Be happy anyway.**

**The good you today,  
People will often forget tomorrow;  
Do good anyway.**

**Give the world the best you have,  
And it may never be enough;  
Give the world the best you've got anyway.**

**You see, in the final analysis,  
It is between you and GOD;  
It never was between you and them anyway.....**

**(Author Unknown)**

## Հարցում Պատասխան Բաժին

### Ինչպե՞ս ենք ողջունում հոգեւորականներին:

- Կաթողիկոսին՝ Աստված օգնական, Վեհափառ տեր:
- Արքեպիսկոպոսին եւ Եպիսկոպոսին՝ Աստված օգնական Սրբազան հայր:
- Ծայրագոյն վարդապետին, Վարդապետին, Աբեղային՝ Աստված օգնական, Հայր Սուրբ:
- Քահանային՝ Օրհնեա՛, Տեր:

### Մկրտության ժամանակ քահանայի հարցումին կնքահայրը ի՞նչ է պատասխանում:

- Երեխայս զի՞նչ խնդրե, -հարցնում է քահանան:  
Կնքահայրը պատասխանում է.
- Հավատք, Հույս, Սեր եւ Մկրտություն: Մկրտիլ եւ արդարանալ, սրբիլ ի մեղաց, ազատիլ ի դիվաց եւ ծառայել Աստուծոյ:

### Ս. Պատարագի ժամանակ ինչպե՞ս են իրար Ողջունում:

- Ողջույն տվողն ասում է.
- Քրիստոս ի մեջ մեր հայտնեցավ:
- Ողջույն ստացողը պատասխանում է.
- Օրհնյալ է հայտնութիւնը Քրիստոսի:

### Մասի բաժանման ժամանակ ի՞նչ են ասում:

- Մաս բաշխողը ասում է.
- Մաս եւ բաժին եղիցի Սուրբ պատարագիս:
- Մաս ստացողը պատասխանում է.
- Բաժին իմ Աստուած հավիտյան:

### Ս. Հաղորդություն ստանալու ժամանակ ի՞նչ են ասում:

- Հավատացեալն ասում է .
- Մեղայ Աստուծո:
- Քահանան պատասխանում է.
- Սա եղիցի քեզ քաւություն եւ թողություն մեղաց քոց:

## Խորհրդածություն

ՕՐԸ՝ ՏԻՐՈՋ ՄԷՋ ՀԱՆԳՉԵԼՈՒ ՕՐ Է

*«Բնաւ չդադրինք պաշտամունքի հաւաքոյթներուն  
մասնակցելէ...» (Եբր.10:25):*

Աստուածային հրահանգ է որ Աստուծոյ զաւակները միշտ եկեղեցի յաճախեն: Ուրի մէկը թող չպատճառաբանէ թէ ինք շատ զբաղ է եւ հետեւաբար եկեղեցի չի կրնար երթալ Կիրակի օրերը:

Յիսուսէն աւելի՞ զբաղած ենք: Յիսուս մնայուն կերպով տաճար կը յաճախէր: Ան ուզեց օրինակ դառնալ մեզի: Մէկը թող չըսէ թէ ինք շաբաթը վեց օր կ'աշխատի եւ եղած չեղածը մէկ օր ունի հանգիստի, այդ ալ Կիրակի օրն է: Ո՛ր կ'ուզես հանգիստ ընել կամ ո՞ր կը գտնես հանգիստդ: Պատշգամ դրուած խորովածին դիմաց, անկողնի՞ մէջ, կլկլակին առջե՞ւ: Ա՛յս է քեզի համար հանգիստը: Յիսուս չըսա՞ւ որ եթէ իրեն գաս քեզի հանգիստ պիտի շնորհէ (Մտ.11:28): Չե՞ս հաւատար Իր տուած խոստումին: «Կիրակի» բառը կը նշանակէ «Տիրոջ օր»: Տիրոջ օրը Աստուծոյ օրն է: Հաւատացեալ մարդը Աստուծոյ օրը՝ Աստուծոյ տան մէջ եւ Աստուծոյ ժողովուրդին հետ պէտք է ըլլայ: Եթէ հաւատացեալ ենք, չենք կրնար մեր հաւատքը արտայայտել տուն մնալով, երբ անդին Աստուծոյ զաւակները համախմբուած են իրենց հաւատքի հիմնադիրին՝ Քրիստոսի շուրջ: Անհատի մը եկեղեցի չերթալը կրնայ արդարանալ եթէ երբեք բանաւոր պատճառներ կան: Բայց առանց պատճառի եկեղեցի չերթալը կամ խորհիլ որ մենք կրնանք հոգեւորապէս աճիլ առանց եկեղեցի երթալու՝ սխալ է: Անհատ հաւատացեալը Քրիստոսի մարմնին մէկ անդամն է, իսկ Քրիստոսի մարմինը՝ եկեղեցին ինքն է: Անդամը կարիքը ունի մարմնինն որպէսզի առաւել եւս աճի եւ հզօրանայ:

Միրելի՛ բարեկամ, իբրեւ անհատ անդամ, պէտք ունիս Աստուծոյ զաւակներուն քաջալերանքին եւ գօտեպնդումին:

## The Dean Schooled Them

One night four college kids stayed out late, partying and having a good time. They paid no mind to the test they had scheduled for the next day and didn't study. In the morning, they hatched a plan to get out of taking their test. They covered themselves with grease and dirt and went to the Dean's office. Once there, they said they had been to a wedding the previous night and on the way back they got a flat tire and had to push the car back to campus.

The Dean listened to their tale of woe and thought. He offered them a retest three days later. They thanked him and accepted his offer. hat time.

When the test day arrived, they went to the Dean. The Dean put them all in separate rooms for the test. They were fine with this since they had all studied hard. Then they saw the test. It had 2 questions.

1) Your Name \_\_\_\_\_ (1 Points)

2) Which tire burst? \_\_\_\_\_ (99 Points)  
Options – (a) Front Left (b) Front Right (c) Back Left (d) Back Right

**The lesson:** always be responsible and make wise decisions.

## On God's Time

A man walked to the top of a hill to talk to God.

The man asked, "God, what's a million years to you?" and God said, "A minute."

Then the man asked, "Well, what's a million dollars to you?" and God said, "A penny."

Then the man asked, "God.....can I have a penny?" and God said, "Sure.....in a minute."

## Ամեն Մեղք Իր Դեղը Ունի

- 1.- Հպարտության դեղը Խոնարհությունն է:
- 2.- Բարկության դեղը Համբերությունն ու հեզությունն է:
- 3.- Որկրամոլության դեղը կերակուրներէն հեռու մնալն է:
- 4.- Բղջախոհության դեղը պահքը,աղօթքն ու մարմնի տանջանքն է:
- 5.- Ամբարտաւանության դեղը խոնարհութիւն գործելն է:
- 6.- Նախանձի ու աստելության դեղը սէրն է:
- 7.- Ծուլության դեղը աշխատասիրությունն է:
- 8.- Ազահության ու փողասիրության դեղը տալն ու ողորմելն է:
- 9.- Հայհոյության դեղը մեղայ ասելն ու փառաբանելն է:
- 10.- Ծաղի դէմ դեղը լացն է:
- 11.- Կատակերգության դէմ դեղը հոգեւորի մասին խօսելն է:
- 12.- Բամբասանքի դէմ դեղը լռութիւնն է:

Ամեն մեղք իր հիւանդության չափի դեղ ունի ու ամեն մարդ այս մասին պիտի իմանայ. Գրում է Ս. Գրիգոր Տաթևացին:





## HOME BLESSING

**T**he home is a sacred place where family members maintain and share many values. It is also a place where they are charged and empowered with these values to live a peaceful and God-pleasing life. It is under this roof that all collectively form oneness in spirit and assume an important responsibility in the life of the community. It is in this place where they break bread and share joys and sorrows. Here the presence of the Omnipotent is felt since every family is a miniature of a "Little Church—Ecclesia." In this "Little Church" the inexhaustible love and the very generous blessing of God permeate.

For Home Blessing the priest takes with him wafer and incense, and blesses the bread, the water and the salt provided by the family. These three fundamental elements are essential life-giving gifts for human life. The priest asks from the Omnipotent God not to lessen these three gifts without which life becomes impossible or imperfect.

The bread, the water and the salt are symbols of God's infinite goodness and care. With the blessing of these great gifts the household is enriched spiritually and its existence perpetuated for the service of his Creator. Along with the bread, salt, and bread offered on a tray by the dwellers, the priest places also the wafer stamped with a crucifix and designs of grapes and wheat. The wafer is the presence of Christ in the home. The members of the family can either distribute the wafer among themselves or keep it in a jar along with flour, salt, or rice.

During Home Blessing it is customary to burn incense which symbolizes the burning of our souls with our Lord's love. In his supplication the Psalmist says, "Let my prayer be counted as incense before Thee." Through this ceremony everyone's faith is replenished and strengthened and the Lord's presence is felt.

FOR HOME BLESSING, PLEASE CALL  
FR.MASHDOTS KESHISHIAN AT (818) 293-9098.

# DONATE FOR ALTAR FLOWERS

One way to celebrate the life of a loved family member or a friend is to donate either altar flowers for the Divine Liturgy.

Donations may be made by individuals or families for various occasions, such as name days, birthdays, anniversaries or on the occasion of a Requiem Service (Hokehankist).

## Ս. ԽՈՐԱՆԻ ԾԱՂԻԿՆԵՐ

Ի յիշատակ Ձեր գերդաստանի հին եւ նոր ննջեցելոց, Ս. Խորանը զարդարելու համար ծաղիկներ նուիրելը վաղեմի սովորություն է մեր եկեղեցում: Նպատակ ունենալով վերականգնել այս գեղեցիկ բարեպաշտական ավանդույթը՝ քաջալերում ենք, որ Ձեր սրտաբուխ նուիրատություններով մասնակից դառնաք:



# The Meaning of the Grapes

It is important to know the meaning of the grapes!


**Question: Why does the Armenian Church do the blessing of the grapes on the Day of the Assumption of the Holy Mother-Of-God?**

**1. Let's remember, my dears - the grapes have spiritual meaning in them. First of all because when Noah came out of the ark after landing on the Mountain Ararat when the Great Flood was over, the first thing he planted on the earth was a vineyard.**

**2. Jesus himself said: -"I'm the true vine" (John 15). What is made out of grapes? Wine! And what does wine symbolize? It represents the blood of Jesus Christ. Therefore, my dears, the blessing of the grapes takes place on the Day of the Assumption of the Holy Mother-Of-God, as Saint Mary was the one to give birth the true wine, our Jesus Christ!**

**When the wine runs out during the wedding at Cana, Jesus delivers a sign of his glory by turning water into wine - meaning that Jesus Christ came to sweeten our lives, converting the worries and difficulties, that pressure our souls like water, into sweet wine.**

*Der Mashdots Keshishyan*



## St. Kevork Armenian Apostolic Church

In celebration of the Assumption of the Holy Mother-Of-God, we will  
have a Holy Liturgy, Blessing of the  
Grapes & Luncheon provided by the Ladies Society  
Tickets: \$10 Adults, \$7 Children 5-12  
On Sunday, August 18<sup>th</sup>, 2019

Blessing of the Grapes will take place in the end of the Holy Liturgy! We would like to invite you all to be present at this beautiful event & be a part of the day's blessings!

In accordance with the church's regulations, with the occasion of Assumption of the Holy Mother-Of-God, we will have no requiem memorial services that day.

## Ս. Գեորգ Հայց. Առաքելական եկեղեցի

9215 SE Church St, Clackamas, OR 97015

Ս. ԱՍՏՈՒԱՄԱՆԺՆԱՅ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՕՒՆ ԱՌԹԻՒ  
Ս. ՊԱՏԱՐԱԳ, ԽԱՂՈՂՕՐԶՆԷՔ ԵՒ ՀԱՒԱՔԱԿԱՆ ՄԻՐՈՑ ՃԱՇ  
ԿԻՐԱԿԻ, 18 ՕԳՈՍՏՈՍ 2019

Խաղողօրհներ՝ յաւարտ Ս. Պատարագի

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու Ս. Պատարագին  
և խաղողօրհների հոգեպարար արարողութեան՝ հաղորդակից ըլլալու օրուան  
օրհնաբեր խորհուրդին: